ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0077, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 26

«16» 04 2015 թ.

<Հ-592

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան,

Ի պատասխան Ձեր 2015 թվականի ապրիլի 2-ի թիվ 02/12.6/5242-15 գրության՝ հայտնում եմ, որ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև «Ավելի մրցունակ և զանազանեցված մասնավոր հատվածի շուրջ» օժանդակության համաձայնագրի թիվ 6 փոփոխության կնքման առաջարկությանը համաձայնություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ սկզբունքային դիտողություններ և առաջարկություններ չկան:

Միաժամանակ, Ձեզ եմ ուղարկում «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև «Ավելի մրցունակ և զանազանեցված մասնավոր հատվածի շուրջ» օժանդակության համաձայնագրի թիվ 6 փոփոխության վերաբերյալ ՀՀ Նախագահի աշխատակազմի փորձագիտական-վերլուծական վարչության եզրակացությունը:

Առդիր՝ 1 էջ:

Հարգանքով՝

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

010-10096
«16» 04 2015 թ.

Եզրակացություն

«ՀՀ Կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարության միջև «Ավելի մրցունակ և զանազանեցված մասնավոր հատվածի շուրջ» օժանդակության համաձայնագրի թիվ 6 փոփոխության նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ

Նախագծի վերաբերյալ հայտնում ենք հետևյալ նկատառումները.

1. Նախագծի 4-րդ կետով լրացվող՝ 5.4 բաժնի գ. կետով նախատեսվում է սահմանել նախապայման, ըստ որի ՀՀ կառավարությունը պետք է ՀՀ Ազգային Ժողով ներկայացնի «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի փոփոխություն՝ Արարատի և Արմավիրի մարզերում ձկնաբուծարաններում օգտագործվող ստորգետնյա ջրի համար ջրօգտագործման վճարը սահմանելով ծավալի 100%-ի չափով (*հարկ է նշել, որ գործող օրենքի համաձայն՝ նշված ջրօգտագործման համար վճարի հաշվարկն իրականացվում է ստորերկրյա ջրերի արդյունահանված պաշարի ընդհանուր ծավալի 50 տոկոսի հիման վրա*):
   Գտնում ենք, որ լրացուցիչ քննարկման կարիք ունի վերոհիշյալ նախապայմանի սահմանման նպատակահարմարությունը և առաջարկում ենք հարցին անդրադառնալ ՀՀ-ում ձկնաբուծարանների գործունեության և ոլորտի հետագա զարգացման վրա վերջինիս հնարավոր ազդեցության գնահատումից, ինչպես նաև ՀՀ-ում գործող ձկնաբուծարաններում ջրի շրջանառության փակ և կիսափակ համակարգերի ներդրման փորձնական ծրագրերի իրականացումից և արդյունքների ամփոփումից հետո:
2. Միաժամանակ, առաջարկում ենք խմբագրել Նախագծի 4-րդ կետով լրացվող՝ 5.4 բաժնի ա. կետը՝ նախատեսելով, որ ՀՀ կառավարությունը ոչ թե *<u>ապահովի</u>* քաղաքացիական ավիացիայի նոր օրինագծի *<u>ընդունումը</u> ՀՀ Ազգային Ժողովի կողմից,* այլ ՀՀ կառավարությունը քաղաքացիական ավիացիայի նոր օրինագիծ *<u>ներկայացնի</u>* ՀՀ Ազգային Ժողով:

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ-ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ
11.04.15թ.